

Երբ Երկունքի մէջ էք Ե՞րբ Հիանդանոց Երթալ

When to Come to Hospital in Labour



Armenian

July 2022

Նախ քան տունէն ելլելը կը խնդրենք կապուիլ ծննդաբերութեան ծառայութեան կամ Մանկաբարձին հետ: Մանկաբարձը ձեզի պիտի ըսէ թէ ինչ պէտք է ընէք եւ պատասխանէ որեւէ հարցումներու:

Եթէ ձեր առաջին երեխան կը սպասէք

Եթէ ձեր ծննդաբերութեան թուականին մօտ էք (37 շաբաթ կամ ավելի), պէտք է հիանդանոց երթաք:

- Երբ կանոնաւոր երկունքի ցաւեր կ'ունենաք որոնք կը սաստկանան, իրարու ավելի մօտ, եւ սկիզբէն մինչեւ վերջ կը տեսնէ 60 երկվայրկեան: Կծկումները պէտք է այս կերպ գան առնուազն մէկ ժամ տեսողութեամբ: Կանանց մեծամասնութեան համար երկունքի ցաւերը իրարմէ երեքէն հինգ վայրկեան տարբերութեամբ կու գան:

Կամ

- Երբ ձեր «ջրապարկը հոսիլ սկսի»: Այս այն ժամանակն է երբ երեխային շուրջը գտնուող ջրի պարկը կը պատռուի: Կրնաք թեթեւ հոսք ունենալ կամ հեղուկի յանկարծական հոսք: Երբ ձեր ջուրերը կոտրուին լաւ գաղափար է առողջապահական բարձիկ մը դնել: Երբ հիանդանոց հասնիք ձեր Մանկաբարձը պիտի քննէ հեղուկին գոյնը եւ հոտը:

Կամ

- Եթէ ունիք վառ կարմիր արիւնահոսութիւն:

Եթէ ձեր առաջին երեխան կը սպասէք եւ 37 շաբաթէն պակաս յղի էք, եւ, եթէ որեւէ երկունքի նշաններ ունիք, օրինակ երկունքի ցաւեր, ջուրը կոտրած է կամ արիւնահոսութիւն, պէտք է դիմէք հիանդանոց:

Եթէ նախապէս ծննդաբերած էք

Պէտք է հետեւիք վերի խորհուրդին, միայն թէ հիանդանոց պէտք է երթաք երբ ձեր կծկումները հինգէն եօթը վայրկեան տարբերութեամբ ըլլան:

Եթէ Անգլերէն խօսելու օգնութեան կարիքը ունենամ

Եթէ Անգլերէն հասկնալու եւ խօսելու համար օգնութեան կարիքը ունիք մասնագէտ թարգմանիչներ մատչելի են: Ընտանիքի անդամ մը կամ բարեկամ մը կրնայ ներկայ ըլլալ, բայց ձեր խնամքի վերաբերեալ բոլոր հաղորդակցութիւնը պէտք է ըլլայ մասնագէտ թարգմանիչի մը միջոցով:

Թարգմանութեան ծառայութիւնները ձրի են եւ գաղտնապահ:

Թարգմանիչ խնդրելը ձեր իրաւունքն է եթէ չեն առաջարկած ձեզի: Աշխատակազմը ձեզի համար թարգմանիչ կ'ապահովէ:

Եթէ մեզ հետ կապուելու համար թարգմանիչի մը կարիքը ունիք, հեռաձայնեցէք Հեռախօսային Թարգմանութեան Ծառայութիւն (TIS) 131 450 հեռախօսահամարին:

Local Contact (Տեղական կապ)

Person's name (Անուն): _____

Contact number (Հեռախօսահամար): _____